

բացասարեւ Դաւիթ պտրքին. քաջ երաժիշտ ըլլալը եւ հաւնող ձայն ունենալը: Հաւանօրէն Դաւիթ պտրք. կոնխաւ թուղթ մը գըրած էր Հոովմ. այդ պատճառաւ է որ Տէրզնցին իր նամակին մէջ հետեւեալ տողերը մէջ կը բերէ. «որ եւ մի ի շառաւիղացոյ փայլակնանկն կայծակնասես՝ ժառանգաց ի կայսերանիս եւ ի փափարեանի ի մեծն Հոովմ»: Տէրզնցին յետոյ կը յօրինէ ներբողական քերթուած մը՝ որուն տնազլուիս գրերը կը կապեն Տէր Դաւիթ Պատրիարք բառերը. Տէրզնցին կ'աւելցնէ նաեւ թէ Հոովմոյ Փափը իրենց չնորհած է եկեղեցի մը Ս. Մարիամ Եփրատացի անունով. որ տարին միայն հարիւր քսան դրամ եկամուտ ունի. Հոովմ եւ կող հայերը բազմաթիւ են եւ շատերը աղքատ. այս եկամուտը հալթոյթած էր Սուրբանշահ իշխանը. եւ որ սակայն շատ անբաւարար է աղքատներուն կերակուրի, ըմպելիքի եւ անկողինի համար. ուստի իրենց եկեղեցիին աղքատիկ վիճակը պարզելով՝ պտրքէն. օգնութիւն կը խնդրեն: Նոյն թուղթով պատրիարքը կը կոչուի նաեւ Պատրիարք Սուրբ Գերեզմանիկ Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ կը խնդրուի իրմէ որ հաճի զրկել իրենց այնպիսի սուրբի մը մասունքը որուն համբաւը լսուած ըլլայ Հոովմի ժողովուրդէն. եւ անոր հետ զրկուի նաեւ մասունքին տնունը կրող սուրբին կատարած սքանչելիքներուն պատմութիւնը. երբ մասունքը զրկուի կը խոստանան զիմաւորելով՝ հանդիսաւորութեամբ տանիլ գնել եկեղեցին, որ ժամանակ Հոովմի ժողովուրդը պիտի տեսնէ թէ նոյն մասունքը երուսաղէմէն պարզեւ տրուած է Հայոց. յետոյ կը խնդրուի նաեւ որ պատրիարքը նամակ մը գրէ փափին եւ յիշէ իր օգնութիւնը իրենց եկեղեցիին եւ մասունքին զրկուիլը. միջնորդէ փափին մօտ, որպէսզի ան իրենց եկեղեցիին համար գըրթութեամբ շարժի եւայն. պատրիարքին կ'ըսուի նաեւ եւ առաջնացնալ զպերճ նաւակի հայր գրով. եւ գտնար մասն ընդ առն ու մեկն մահեստի փախազողի Սրբոյն Պողոսի եւ Պետրոսի, եւ երբ մօտի Հոովմայ առնր միոյ ճանապարհն ազդ առնէ մեզ, զի մեք եղբայր ընդ առաջ նորա եւ պատուով մուծցուք ի քաղաքն. կը խոստանան ճամբու ծախքը զրկել պատրիարքին ինչպէս նաեւ ընծաներ. ու կը գրեն որ պիտի ջանան առաջին առթիւ պատրիարքին հասցնելու նոր տպագրուած հայերէն Սարմուք եւ Աւետարանը:

Տէրզնցին այս աղաչանքներէն վերջ, կ'աւելցնէ ուրիշ խնդիր մ'ալ ու կ'ըսէ. Եթովպիա, Արաբիա, Սուրիա, Վրաստան,